Վահան Թեքեյան

Իմ գյուղը

Իմ գյուղը միշտ իր լայն ու լույս երկնքով,
Իր արտերի հղությունով հանդարտ,
Մանկությունով աղբյուրների իր թոթով
Եվ լեռների շրջությունով զվարթ,
Ուր որ երթամ՝ կդառնա շուրջը մտքիս,
Ծովահայաց ճամփաների մեջ իրեն
Մերթ բռնում է հոգնած աչքերս ու հոգիս,
Մերթ փչո՛ւմ է երեսիս մի հով իր հովից...
Իր տողոցով գյուղս կաճեր ու կերգեր
Կսարսռա՛ր իր սերերով ծաղկավետ,
Կօրհնածայներ իր ծերերի շուրթի հետ...
Իմ գյուղը, տեր, արդյոք, ինչ զով զեփյուռներ,
Հով արևներ, ծով ստվերներ կտեղա
Այնտեղ թողած, այնտեղ թաղվա՛ծ սրտիս վրա: